Անգլիացիների երևալը Զանգեզուրում առաջ բերեց անխառն ուրախութիւն, որը, սակայն, շուտով պղտորուեց անգլիացիների բռնած երկդիմի դիրքով. «մեր մեծ դաշնակցի» ներկայացուցիչներն էլ աշխատում էին Զանգեզուրը դնել Ազրբէջանի իշխանութեան տակ: Զանգեզուրցիք ցասումով բողոքեցին և ըմբոստացան այդ ծրագրի դէմ: Այդ առթիւ Զանգեզուր գնաց գօր. Թոմսընի տեղակալ գօր. Շատելվորդը և Հայաստանի ներկայացուցիչ Ց. Արղութեանը: Զանգեզուրցիք Շատելվորդին էլ ընդունեցին դայրոյթով ու միակ պահանջով՝ միացնել Զանգեզուրը Հայաստանին: Շատելվորդի սպառնալիքների վրա՝ զանգեզուրցիները զինուած ցոյց արին նրա ինքնաշարժի շուրջ և քիչ էր մնում ձերբակալէին նրան: Շատելվորդը հեռացաւ ձեռնունայն, իսկ Ց. Արղութեանը, որ Ղարաբաղի հարցում կուսակից էր փոխադարձ զիջումի, դեկուցում տարաւ Երևան, թէ, ստեղծուած պայմաններում, ո՛չ միայն Զանգեզուրը, այլ և Ղարաբաղն էլ չի կարելի թողնել Ազրբէջանի տիրապետութեան տակ:

Թիւրքերի պարտութիւնից յետոյ, կուսակցութիւնների և կազմակերպութիւնների փոխադարձ համաձայնութեամբ որոշուեց կեանքի կոչել Զանգեզուրի Կենտրոնական Ազգային Խորհուրդը, 9 անդամներով, որոնք պիտի ընտրէին շրջաններից: Ընտրուեցին Սիսիանից Մ. Զաքարեան, Ց. Տէրունի և Գ. Տէր-Մկրտչեան, Բուն Զանգեզուրից՝ Տ. Սադանդարեան, բժ. Մ. Պարոնեան, Ն. Յովսէփեան, Ղափան—Մեղրիից՝ Ս. Մ.-Բարամեան, Ա. Շիրինեան, Ս. Մ.-Ստեփանեան: Խորհուրդը գործի անցաւ դեկտեմբերի սկզբին և այդ օրից լուծուած համարուեցին բոլոր հին մարմինները:

Ազգային Խորհուրդը ձեռնարկեց գաւառի իշխանութեան հիմնական կազմակերպութեան: Ամէն ինչ նորից պէտք էր սկսել: Խորհրդի նախագահ և միանգամայն գաւառապետ ընտրուեց Մ. Պարոնեանը, որին, երկու ամիս անցած, գաւառապետի պաշտօնում փոխարինեց Ն. Յովսէփեանը: Նշանակուեցին շրջանային կոմիսարներ: Վերընտրուեցին գիւղական կոմիսարները: Ստեղծուեց գաւառական պարենաւորման կոմիտէ. շրջաններում նշանակուեցին պարենաւորման կոմիսարներ: Գորիսում հիմնուեց շրջանային դատարան: 1919թ. յունուարին յայտարարուեց 20—22 տարեկան զանգեզուրցիների զօրահաւաք և ստեղծուեց տեղական մնայուն զօրամաս: Պետական կարիքների համար հարկ դրուեց ազգաբնակութեան վրա:

Յունուարի վերջերին Ազգ. Խորհրդի կողմից Երևան ուղարկուեց Ա. Շիրինեանը՝ ստանալու համար դրամ ու ռազմամթերք և խնդրելու, որ Հայաստանի կառավարութիւնը փութացնէ Զանգեզուրի նահանգապետի առաքումը: Վերջինիս դալը անհրաժեշտ էր, որովհետև, ձիւնը հալելուն պէս, Անդրանիկը պիտի հեռանար և նրան պէտք է փոխարինէր մէկ ուրիշը:

զինուորական շրջաններում ու քաղաքի բնակչութեան մէջ: Զօր. Նազարբէգեանն ու Հախվերդեանը արտօնութիւն խնդրեցին՝ զէնքի ուժով վերջ տալու խայտառակութեան, կառավարութիւնը, սակայն, տատանւում էր. չէր ուզում տեղիք տալ եղբայրասպան ընդհարումների: Եւ միայն ամերիկեան ներկայացուցչին և հայ հոգևորականներին մէջտեղ ձգելով, երևկոյեան դէմ, Երևանի «պաշարումը» վերացուեց, և Անդրանիկը իր զօրքերով վերադարձաւ Էջմիածին: